ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 մայիսի 2021 թվականի N 968

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 10 ՓԵՏՐՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 243 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Համլետ Վոլոդյայի Իսպիրյանի դիմումը, ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 29.03.2021թ. թիվ Կ-29032021-06-0023 որոշումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 10 փետրվարի 2021 թվականի թիվ 243 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 10 փետրվարի 2021 թվականի «Վանաձոր քաղաքի Գ. Նժդեհի փողոց թիվ 43 և 43/3 հասցեներում գտնվող, Համլետ Վոլոդյայի Իսպիրյանին սեփականության իրավունքով պատկանող հասարակական գործառնական նշանակության հողամասերը և գույքը որպես մեկ գույքային միավոր միավորելու և փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 243 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները.

1. Որոշման վերնագիրը «պատկանող» բառից հետո լրացնել «հողամասերի ճշտված սահմանները հաստատելու,» բառերով:

2. Որոշման նախաբանը «ղեկավարվելով» բառից հետո լրացնել «ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով,» բառերով:

3.Որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1-ին կետով.
«1. Հաստատել Վանաձոր քաղաքի Գ. Նժդեհի փողոց թիվ 43 և 43/3 հասցեներում գտնվող, Համլետ Վոլոդյայի Իսպիրյանին սեփականության իրավունքով պատկանող ընդհանուր 0.03198հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի: »:

4. Որոշման 1-ին և 2-րդ կետերը համապատասխանաբար կարդալ որպես 2-րդ և 3-րդ կետեր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. մայիսի 10
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 մայիսի 2021 թվականի N 969

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 219 ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 24 սեպտեմբերի 2019 թվականի թիվ 219 նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանք), ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ և 37-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

1.Վանաձոր համայնքի ղեկավարի 24 սեպտեմբերի 2019 թվականի թիվ 219 նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ 9.3 կետում «9.5» թվերը փոխարինել «11.50» թվերով:

2. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 04 հոկտեմբերի 2019թ. թիվ 219 շինարարության թույլտվությանը կից 04 հոկտեմբերի 2019թ. թիվ 189 նախագիծը (երկհարկանի տարբերակ):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. մայիսի 10
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 մայիսի 2021 թվականի N 970

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱՂԱՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 63-1/1-36 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՑ ՎԻԿՏՈՐԻԱ ԳՈՒՐԳԵՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վիկտորիա Գուրգենի Հովհաննիսյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 27012021-06-0028 վկայականը, ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 48[1]-րդ հոդվածով և 76-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ կետի ա) ենթակետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի ա) ենթակետով, Վանաձոր համայնքի ավագանու 25 նոյեմբերի 2020 թվականի թիվ 114-Ն որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածի 1-ին կետով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Աղայան փողոց թիվ 63-1/1-36 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին դասվող 19.75քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի, կառուցապատման իրավունքով, 5 տարի ժամկետով տրամադրել Վիկտորիա Գուրգենի Հովհաննիսյանին՝ տաղավար տեղադրելու նպատակով:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Վիկտորիա Գուրգենի Հովհաննիսյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 19.75քմ մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիր՝ 1.0քմ մակերեսով հողամասի համար ամսական վճարը սահմանելով 600 (վեց հարյուր) ՀՀ դրամ:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ք.Վանաձոր, Աղայան փողոց, թիվ 63-1/2-35 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. մայիսի 10
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 մայիսի 2021 թվականի N 971

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱՐԵԿԱՑԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 67Բ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿՆԵՐԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աշոտ Ժորայի Արզումանյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1714655 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Նարեկացի փողոցի թիվ 67բ հասցեում գտնվող ավտոտնակներին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք.Վանաձոր, Նարեկացու փողոց, թիվ 67/2-2 ավտոտնակներ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. մայիսի 10
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 մայիսի 2021 թվականի N 972

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱՐ-ԴՈՍ ՓՈՂՈՑ ԹԻՎ 95/2 (ՊԱՅՄԱՆԱԿԱՆ) ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՇԻՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԻՐԱՆՈՒՇ ԴԱՆԻԵԼԻ ՍԱԴՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սիրանուշ Դանիելի Սադյանի (ծնված՝ 18.09.1959թ.) դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, Փոխադարձ հաշվարկների ստուգման ակտը, 22.02.2021թ. թիվ 685 (նոտարական ակտի կոդ: 594-20210222-88-4947496) հայտարարությունը, 12.03.2021թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-35/21 Ի եզրակացությունը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Նար-Դոս փողոց թիվ 95/2 (պայմանական) հասցեում գտնվող բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 136.4քմ մակերեսով հողամասը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1990թ., դրա կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 136.4քմ մակերեսով հողամասը զբաղեցվել և շահագործվում է սկսած 1990թ.-ից:
Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի ա) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Սիրանուշ Դանիելի Սադյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր քաղաքի Նար-Դոս փողոց թիվ 95/2 (պայմանական) հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 136.4քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Վանաձոր քաղաքի Նար-Դոս փողոց թիվ 95/2 (պայմանական) հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Նար-Դոս փողոց, թիվ 95/2-4 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. մայիսի 12
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 մայիսի 2021 թվականի N 973

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 34-121/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վիլյամ Արծրունու Սարգսյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 26052017-06-0002 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա թիվ 34-121/1 հասցեում գտնվող ավտոտնակին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Վարդանանց փողոց, թիվ 174/1 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. մայիսի 12
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 մայիսի 2021 թվականի N 974

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 20 ՀԱՍՑԵՈՒՄ «ՄԵՏՐՈՊՈԼԻՆԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՅՈՒՐԱՆՈՑԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՄԵՏՐՈՊՈԼԻՆԱ» ՍՊԸ-ի տնօրեն Գագիկ Եղիշի Հովսեփյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1151721 վկայականը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի, շինությունների և շենքի հատակագծերը, շինությունների բնութագիրը, 27.02.2015թ. տրված շինարարության շահագործման փաստագրման թիվ 8 ակտը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1.Հաստատել Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծ պողոտա թիվ 20 հասցեում «ՄԵՏՐՈՊՈԼԻՆԱ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հյուրանոցի զբաղեցրած 1.0515հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագծի: Հողամասում առկա 73.07քմ ընդհանուր մակերեսով ինքնակամ կառուցված պարիսպները թողնել ինքնակամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. մայիսի 12
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 մայիսի 2021 թվականի N 975

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի պահանջներով՝ ***որոշում եմ.***

Գումարել Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստ 2021 թվականի մայիսի 19-ին՝ ժամը 11:00-ին, համայնքապետարանի վարչական շենքի նիստերի դահլիճում հետևյալ օրակարգով.

1.Վանաձոր համայնքի ավագանու 2021թ. մայիսի 19-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին

զեկ. Մ.Ասլանյան

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի ավագանու 2020թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 123-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

զեկ. Վ.Գրիգորյան

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորհամայնքի ավագանու 2020թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 123-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

զեկ. Վ.Գրիգորյան

4. Վանաձոր համայնքի ավագանու անդամ _____ լիազորելու վերաբերյալ

Ա.Հովհաննիսյան

5. Վանաձոր համայնքի ավագանու անդամ _____ լիազորելու վերաբերյալ
զեկ.Ա.Հովհաննիսյան

6. Վանաձոր համայնքի ավագանու անդամ _____ լիազորելու վերաբերյալ
զեկ.Ա.Հովհաննիսյան

7.Վանաձոր համայնքի «Տիկնիկային թատրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տարածքների վարձավճարների նվազագույն սակագները սահմանելու մասին

զեկ.Վ.Դավիթավյան

8.Համայնքային սեփականություն հանդիսացող աղբատար մեքենան վարձակալությամբ հանձնելու մասին

զեկ. Վ.Դավիթավյան

9. 13 հունիսի 2011 թվականի ոչ բնակելի տարածքի անհատույց օգտագործման թիվ 183 պայմանագիրը լուծելուև «Մանկավարժ» բարեգործական հասարակական կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով տարածք հանձնելու մասին

զեկ.Վ.Դավիթավյան

10.Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 147 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ. Գ.Մացակյան

11.Վանաձոր համայնքի ավագանու 14 փետրվարի 2020 թվականի թիվ 7 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

զեկ. Գ.Բաղյան

12.Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 146 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ.Գ.Բաղյան

13.Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը մրցույթով վարձակալության իրավունքով տրամադրելու և հողամասերի վարձավճարների մեկնարկային գները սահմանելու մասին

զեկ.Ս.Աբովյան

14.Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային վաճառքի նվազագույն մեկնարկային գները սահմանելու մասին

զեկ.Ս.Աբովյան

15. Ժաննա Արամի Վարդիկյանին Վանաձոր քաղաքի Բուլղարական 1 ավան թիվ 10 հասցեում գտնվող բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասը նվիրատվությամբ հանձնելու մասին

զեկ.Ս.Աբովյան

16. Վահրամ Հովհաննեսի Սարգսյանին Վանաձոր քաղաքի Բուլղարական 1 ավան թիվ 46 հասցեում գտնվող բնակելի տունը, շինությունը և դրանց զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասը նվիրատվությամբ հանձնելու մասին

զեկ.Ս.Աբովյան

17.Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին

զեկ. Մ. Ասլանյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. մայիսի 12
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 մայիսի 2021 թվականի N 976

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 15-Ի «ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 32 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով հաստատված եռամսյակային բաշխումները և հաշվի առնելով գնումների պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման առարկաների բնութագրերի նախագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 13-ի «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» թիվ 390-Ն որոշմամբ հաստատված թիվ 3 հավելվածով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 2021 թվականի հունվարի 15-ի «Վանաձոր համայնքի գնումների պլանը հաստատելու մասին» թիվ 32 որոշման հավելվածում կատարել լրացում՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. մայիսի 12
ք.Վանաձոր